



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ.....	2
ՀՀ ՀԱՄԱԽՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	5
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	6
ՀՀ պետական բյուջեի եկամուտները.....	7
ՀՀ պետական բյուջեի ծախսերը.....	9
ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման	10
ՀՀ պետական բյուջեի պակասուրդը.....	15
ՀՀ պետական պարտքը	17
ՀՀ պետական բյուջեի համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին.....	18
ԱՄՓՈՓՈՒՄ	21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լինելով կառավարության գլխավոր ֆինանսական փաստաթուղթը՝ 2021 թվականի պետական բյուջեն մշակվել է զգալի անորոշությունների պայմաններում: Տարեսկզբին կորոնավիրուսի ի հայտ գալը և արագ տարածումը պատճառ դարձան 2020թ. պետական բյուջեի մասին օրենքում փոփոխություններ կատարելու համար, ինչի արդյունքում վերանայվեցին բյուջեի հիմքում դրված տնտեսական աճի կանխատեսումը և բյուջեի պակասուրդը: Այնուհետև, սեպտեմբերի 27-ից սկիզբ առած Արցախյան պատերազմը, որն ուղեկցվեց կորոնավիրուսի երկրորդ ալիքով, ստիպեց կառավարությանը հոկտեմբերին երկրորդ անգամ փոփոխություններ կատարել 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքում՝ կրկին նվազեցնելով տնտեսական աճի կանխատեսումը և մեծացնելով պակասուրդը:

Վերոհիշյալ գործընթացները տնտեսության համար խոշոր ցնցումներ են, որոնց տնտեսական հետևանքները դեռևս ամբողջովին ուսումնասիրված չեն, իսկ դրանց վերաբերյալ գնատահականները հիմնված են մի շարք ենթադրությունների և պայմանական հաշվարկների վրա: Եթե այս իրադարձություններին գումարենք նաև հետպատերազմական քաղաքական անկայունությունը, ապա պարզ է դառնում, որ ապագայի նկատմամբ անորոշությունները հասել են աննախադեպ աստիճանի:

ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից վարվող խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության արդյունքում 2020թ. համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) անկումը որոշակիորեն կմեղմվի: Բացասական ազդեցությունների աստիճանական չեզոքացման հետ մեկտեղ տնտեսության վերականգնումը կլինի դանդաղ, և **2021թ. տնտեսական աճը կլինի ոչ այդքան բարձր՝ կազմելով 3.2%:** Տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերով: Ամբողջական պահանջարկը նույնպես կաճի՝ պայմանավորված հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով:


2020թ. տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև դրա մնայուն ազդեցությունները հաշվի առնելով՝ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականներին կառավարությունը կօգտագործի հարկաբյուջետային կանոններով սահմանված «բացառիկ դեպքի» հնարավորությունը, ինչը թույլ կտա հարկաբյուջետային կանոնների համակարգին համահունչ շեղվել պարտքի և ծախսերի կանոններից:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ


Ինչպես 2020 թվականի սպասվող ցուցանիշները, այնպես էլ 2021 թվականի բյուջեի հիմքում դրվող մակրոտնտեսական կանխատեսումները տարվա ընթացքում մի քանի անգամ նշանակալի վերանայումների են ենթարկվել կառավարության կողմից: Ի սկզբանե 2020 թվականի համար կանխատեսվում էր 4.9% տնտեսական աճ, որը ապրիլ ամսին վերանայվեց դեպի ներքև՝ հասնելով -2.0%՝ հիմնականում կորոնավիրուսի սպասվող հետևանքներով պայմանավորված: Այնուհետև հուլիսին հաստատված 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիմքում դրվող մակրոտնտեսական սցենարում կառավարությունը նվազեցրեց 2020 թվականի կանխատեսումները՝ մինչև -2.6%՝ միաժամանակ մեծացնելով ակնկալիքները 2021թ. տնտեսական աճի վերաբերյալ՝ մինչև 7.0%: Սակայն, փաստացի վիճակագրական տվյալների հրապարակումը ցույց տվեց, որ կորոնավիրուսի բացասական ազդեցությունները շատ ավելի խորն են լինելու, ինչն արտացոլվեց 2021 թվականի պետական բյուջեի հիմքում դրվող սցենարում, որտեղ 2020թ. տնտեսական աճի սպասումը նվազեցվեց մինչև -6.0%, իսկ 2021թ. տնտեսական աճի կանխատեսումը սահմանվեց 4.8%-ի չափ:

Սակայն, դժբախտաբար, այսքանով չեն ավարտվել 2020 թվականի բացասական երևույթները: 2021թ. պետական բյուջեի նախագիծն արդեն հավանության էր արժանացել կառավարության կողմից, երբ սկսվեց Արցախյան պատերազմը, ինչպես նաև կորոնավիրուսի երկրորդ ալիքը: Այս գործոնների հետևանքով անհրաժեշտություն առաջացավ ևս մեկ անգամ փոփոխություն կատարել 2020թ. պետական բյուջեի մասին օրենքում, որով փոխվեց նաև բյուջեի հիմքում դրվող տնտեսական աճի կանխատեսումը՝ դարձնելով այն -6.8%:

Գծապատկեր 1. 2020 և 2021 թվականների տնտեսական աճի կանխատեսումների վերանայումները տարբեր փաստաթղթերում, %



2021թ. տնտեսական աճի կանխատեսումները



Քանի որ 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի փաթեթը պատրաստված էր օգոստոս ամսին, դրանում հաշվի չէր առնվել Արցախյան պատերազմի և կորոնավիրուսի երկրորդ ալիքի ազդեցությունները: Հետևաբար, դրանց ներառման անհրաժեշտությունից ելնելով, կառավարությունը իրականացրել է փոփոխություններ օրենսդրական փաթեթում՝ ներկայացնելով բյուջեի մասին օրենքի նախագծի լրամշակված տարբերակը, որտեղ ևս մեկ անգամ վերանայվել է տնտեսական աճի կանխատեսումները դեպի ներքև՝ 2020թ. համար հասցնելով այն -7.9%: Նվազեցվել է նաև 2021թ. կանխատեսումները՝ հասցնելով 3.2%-ի:

ՀՀ կառավարությունը և Կենտրոնական բանկը 2020թ. իրականացրել և շարունակում են իրականացնել խթանող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականության, որոնց դրական ազդեցությունները տնտեսական ակտիվության վրա գնահատվել և ներառվել են վերոհիշյալ կանխատեսումներում: Դա նշանակում է, որ մակրոտնտեսական քաղաքականության՝ սպասվածից ավելի քիչ արդյունավետ լինելու պարագայում, տնտեսական անկումը կլինի ավելի խոր, քան կանխատեսվել է:

2021թ. կանխատեսվող 3.2% տնտեսական աճը պայմանավորված կլինի հիմնականում ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերով: Ամբողջական պահանջարկի աճը պայմանավորված կլինի հիմնականում ներքին սպառողական և ներդրումային պահանջարկի աճերով:

2020թ. ՀՆԱ դեֆլյատորը կաճի՝ պայմանավորված սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) և ապրանքների միջազգային գների զարգացումներով, իսկ 2021թ.՝ ՍԳԻ-ին համահունչ կարագանա: ԿԲ-ն կարճաժամկետ հատվածում կշարունակի վարել խթանող դրամավարկային քաղաքականություն և կպահպանի քաղաքականության խթանող դիրքը նաև 2021թ.: 2020 և 2021թթ. կպահպանվի

ցածր գնաճային միջավայրը և գնաճը կգտնվի նպատակային թիրախի ստորին հատվածում:

Ըստ կառավարության կանխատեսումների՝ 2020 թվականին սպասվում է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցության 1.3 տոկոսային կետով բարելավում՝ պայմանավորված առևտրային հաշվեկշռի և դրամական փոխանցումների բարելավմամբ: Առևտրային հաշվեկշռի՝ ՀՆԱ-ի նկատմամբ բարելավումը պայմանավորված է ներմուծման՝ արտահանման նկատմամբ ծավալային առումով ավելի շատ նվազմամբ: Դրամական փոխանցումների ծավալը նույնպես կնվազի 2020-ին, սակայն ՀՆԱ-ի ավելի արագ նվազման պարագայում կգրանցվի տրանսֆերտներ/ՀՆԱ հարաբերակցության աճ: 2021 թվականին կանխատեսվում է, որ ընթացիկ հաշվի մնացորդ/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի -6.1%՝ 2020թ. նկատմամբ վատթարանալով 0.2 տոկոսային կետով՝ հիմնականում պայմանավորված ներմուծման վերականգնմամբ:

2020թ. տեղի ունեցած մի շարք շոկերին համապատասխան արձագանքելու նպատակով կառավարությունը հայտարարել է հարկաբյուջետային կանոններով նախատեսված «բացառիկ դեպքի» (“escape clause”) կիրառման վերաբերյալ, ինչի պարագայում հարկաբյուջետային կանոնները կարող են չպահպանվել: Քանի որ շոկերի ազդեցությունները տարածվում են նաև հաջորդ տարվա զարգացումների վրա, 2021 թվականը նույնպես կհամարվի «բացառիկ դեպք» և պետական բյուջեի ծրագրում արտացոլված ցուցանիշները կշեղվեն հարկաբյուջետային կանոններից:

Աղյուսակ 1. 2021թ. Պետական բյուջեի հիմքում դրվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները¹

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2017	2018	2019	2020	2021
	փաստացի	փաստացի	փաստացի	սպասում	ծրագիր (լրամշակված)
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	5,564.5	6,017.0	6,569.0	6,075.9	6,395.3
Տնտեսական աճ, %	7.5	5.2	7.6	-7.9	3.2
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	2.1	2.8	1.5	0.4	2.0
Գնաճ (Ժամանակաշրջանի վերջ), %	2.6	1.8	0.7	1.9	1.7
Գնաճ (միջին), %	1.0	2.5	1.4	1.2	1.9
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %					
Արդյունաբերություն	11.8	4.9	8.3	-0.6	3.6
Գյուղատնտեսություն	-5.1	-6.9	-2.6	0.7	2.3
Շինարարություն	2.8	0.6	3.7	-17.6	3.3
Ծառայություններ	10.6	9.1	10.7	-10.5	3.0
Զուտ հարկեր	9.7	8.0	7.1	-11.1	4.6


¹ 2021թ. պետական բյուջեի ուղերձ, էջ 61:

Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)					
Ընթացիկ հաշիվ	-173.9	-860.0	-987.5	-731.7	-772.3
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-1,241.5	-1,702.3	-1,828.8	-1,539.3	-1,673.5
Արտահանում	4,409.1	4,907.2	5,640.7	3,867.2	4,231.1
Փոփոխություն, %	23.7	11.3	14.9	-31.4	9.4
Ներմուծում	5,650.6	6,609.5	7,469.5	5,406.5	5,904.5
Փոփոխություն, %	26.4	17.0	13.0	-27.6	9.2
Դրամական փոխանցումներ	1,179.3	1,136.2	1,143.8	1,119.7	1,188.1
ՀՆԱ-ի նկատմամբ %					
Ընթացիկ հաշիվ	-1.5	-6.9	-7.2	-5.9	-6.1
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-10.8	-13.7	-13.4	-12.4	-13.3
Արտահանում	38.2	39.4	41.3	31.0	33.7
Ներմուծում	49.0	53.1	54.7	43.4	47.0
Դրամական փոխանցումներ	10.2	9.1	8.4	9.0	9.5

ՀՀ ՀԱՄԱԽԱՄԲՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2021թ. պետական բյուջեի մասին օրենքով համախմբված բյուջեն գնահատվում է եկամուտների գծով 1659.2 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի), ծախսերի գծով՝ 2000.6 մլրդ դրամ (առանց միջբյուջետային փոխանցումների), իսկ դեֆիցիտի (պակասուրդի) գծով՝ 341.4 մլրդ դրամ:

Գծապատկեր 2. 2019-2021թթ. համախմբված բյուջեների համեմատականը, մլրդ դրամ²



² Համախմբված բյուջեի եկամուտներն ու ծախսերը դիտարկվում են առանց միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերի:

2021թ. սպասվում է, որ համախմբված բյուջեի եկամուտները կնվազեն մոտ 4.7%-ով, իսկ ծախսերը կաճեն մոտ 5.2%-ով, ինչի արդյունքում համախմբված բյուջեի պակասուրդը զգալիորեն կաճի՝ հասնելով 341.4 մլրդ դրամի՝ 2020թ. բյուջեով նախատեսված ցուցանիշի համեմատ աճելով 112.5%-ով (մոտ 2 անգամ) և ՀՆԱ-ի նկատմամբ կազմելով 5.3%:


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

2020թ. ընթացքում պետական բյուջեի սպասվող և կանխատեսվող ցուցանիշները բազմիցս վերանայվել են, ինչի ընթացքը ներկայացված է Գծապատկեր 3-ում: 2020թ. պետական բյուջեի մասին օրենքով կանխատեսվել էր 2020թ. ունենալ 1695.0 մլրդ դրամ եկամուտ և պլանավորվել էր 1855.7 մլրդ դրամի ծախս: Սակայն, COVID-19 համավարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամի արդյունքում, 2020թ. տարեկան կանխատեսումները վերանայվել են 2021թ. պետական բյուջեի օրենքի նախագծում, որը Ազգային ժողով է ներկայացվել 2020թ. հոկտեմբերի սկզբին: Ըստ այդ կանխատեսումների՝ 2020-ին նախորդ տարվա համեմատ սպասվում է եկամուտների նվազում 8.2%-ով և ծախսերի աճ 11.8% աճ: Արդյունքում, ավելի քան երկու անգամ մեծացել է պետական բյուջեի պակասուրդի սպասումները՝ պլանավորված 160.7 մլրդ դրամից դառնալով 383.6 մլրդ դրամ: Սակայն, այս ցուցանիշներում հաշվի չէին առնվել Արցախյան պատերազմի ազդեցությունները՝ այն պատճառով, որ բյուջեի մասին օրենքի նախագծի փաթեթը մինչ այդ էր մշակվել և ներկայացվել կառավարության հավանությանը: Հետևաբար, 2020թ. դեկտեմբերին, կառավարությունը ներկայացրել է 2021թ. բյուջեի մասին օրենքի լրամշակված փաթեթը, որտեղ ավելի են ավելացել ծախսերի սպասումները, սակայն, մեծացվել է նաև եկամուտների ցուցանիշը: Այսպես, բյուջեի վերանայված փաթեթով սպասվում է, որ 2020թ. նախորդ տարվա համեմատ բյուջեի եկամուտները կնվազեն մոտ 5.6%-ով, իսկ ծախսերը կաճեն 17.1%-ով: Լրամշակված բյուջեի պակասուրդի ցուցանիշը զգալիորեն մեծ է բյուջեի նախնական տարբերակում ներկայացված ցուցանիշից և կազմում է 429.7 մլրդ դրամ, որը մոտ 6.7 անգամ ավելի մեծ է քան 2019թ. փաստացի պակասուրդը:

2021 թվականի ցուցանիշների կանխատեսումը նույնպես զգալիորեն վերանայվել է բյուջեի նախնական փաթեթը ներկայացնելուց հետո: Այսպես, 2021թ. եկամուտների ծավալը մինչև Արցախյան պատերազմը կանխատեսվել է 1569.1 մլրդ դրամի չափով, իսկ դրանից հետո վերանայվել է դեպի ներքև՝ կազմելով 1509.5 մլրդ դրամ: Վերջինիս աճը 2020թ. սպասվող ցուցանիշի համեմատ կազմում է 2.1%՝ այն դեպքում, երբ նախնական բյուջեով կանխատեսվում էր եկամուտների 9.2% աճ: 2021թ. ծախսերի գծով նախնական և լրամշակված բյուջեների միջև տարբերությունը փոքր է և կազմում է ընդամենը 7.7 մլրդ դրամ: Սակայն, քանի որ

վերանայման արդյունքում մեծացել է 2020թ. ծախսերի սպասվող ցուցանիշը, ստացվում է, որ վերանայված բյուջեով 2021-ին կանխատեսվում է ծախսերի կրճատում մոտ 3.0%-ով:

Գծապատկեր 3. 2019-2021թթ. պետական բյուջեների համեմատականը, մլրդ դրամ



2021թ. բյուջեի պակասուրդը կանխատեսվել էր 274.1 մլրդ դրամի չափ, որը սակայն Արցախյան պատերազմից հետո նույնպես վերանայվել է դեպի վերև՝ հասնելով 341.4 մլրդ դրամի: Բյուջեի նախնական պլանով նախատեսվում էր 2021թ. բյուջեի պակասուրդը 2020թ. համեմատ նվազեցնել 28.6%-ով, սակայն լրամշակված բյուջեով պակասուրդի նվազման տեմպը կրճատվել է՝ կազմելով 20.5%:


ՀՀ պետական բյուջեի եկամուտները

2020թ. պետական բյուջեի սպասվող՝ 1477.7 մլրդ դրամ եկամուտների գերակշիռ մասը՝ 91.3%-ը, հարկային եկամուտներն են, որոնց կշիռը նախորդ տարվա նկատմամբ կնվազի 2.2 տոկոսային կետով: Գրեթե նույն չափով կաճեն բյուջեի ոչ հարկային եկամուտները՝ կազմելով ընդհանուր եկամուտների 7.9%-ը: Սպասվում է նաև դրամաշնորհների տեսակարար կշռի նվազում 0.1 տոկոսային կետով:

2021թ. բյուջեի եկամուտները կկազմեն 1509.5 մլրդ դրամ, որից 95.4%-ը կլինեն հարկային եկամուտները: Հարկ է նշել, որ հարկային եկամուտները պատմականորեն նման բարձր տեսակարար կշիռ չեն ունեցել: 2010-2019թթ. ընդհանուր եկամուտներում հարկային եկամուտների տեսակարար կշռի միջին ցուցանիշը կազմել է 92.2%: Փոխարենը զգալիորեն նվազել է այլ եկամուտների տեսակարար կշիռը, որը կկազմի 3.0%: Պաշտոնական դրամաշնորհները 2021թ. կկազմեն 24.3 մլրդ դրամ՝ 2020թ. նկատմամբ աճելով մոտ 2.2 անգամ, իսկ 2019թ. համեմատ՝ 2.0 անգամ: Սակայն, հաշվի առնելով, որ 2020թ. բյուջեով


նախատեսված էր 35.3 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհների ստացում 2020թ. ընթացքում, իսկ այժմ տարեկան սպասվող ցուցանիշը նվազեցվել է մինչև 10.9 մլրդ դրամի, բավականին անվստահելի է 2021թ. համար նախատեսված 24.3 մլրդ դրամ դրամաշնորհի ստացումը:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2017-2020 թվականներին, %



Պայմանավորված տնտեսական անկմամբ, սպասվում է, որ 2020թ. հարկային եկամուտները նախորդ տարվա նկատմամբ կնվազեն մոտ 7.8%-ով՝ կազմելով ՀՆԱ-ի 22.2%-ը, որը 0.1 տոկոսային կետով ցածր է 2019թ. ցուցանիշից: Ընդ որում, այս կանխատեսումներում ներառված է նաև պատերազմի ազդեցությունը, որը, ինչպես արդեն նշվեց, չի հանգեցրել հարկային եկամուտների դեպի ներքև վերանայմանը:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի հարկային եկամուտները




2021թ. կանխատեսվում է հարկային եկամուտների վերականգնում, ինչի արդյունքում հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 2020թ. համեմատ կաճի 0.3

տոկոսային կետով՝ հասնելով 22.5%-ի, որն ավելի բարձր է, քան 2019թ. համապատասխան ցուցանիշը: Դրա համար անհրաժեշտ կլինի, որ հարկային եկամուտները 2021 թվականին 2020 թվականի համեմատ աճեն 6.7%-ով:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը

Ինչպես կորոնավիրուսի բացասական հետևանքները մեղմելու անհրաժեշտությամբ, այնպես էլ Արցախյան պատերազմով պայմանավորված՝ 2020-ին նախատեսվում է պետական բյուջեի ծախսերի զգալի աճ՝ 2019 թվականի համեմատ՝ մոտ 17.1%-ով: Ընդ որում, նախատեսվում է ընթացիկ ծախսերի 12.9% աճ, իսկ կապիտալ ծախսերի՝ 48.1% աճ: Սակայն, պետք է նշել, որ կապիտալ ծախսերի կտրուկ աճը պայմանավորված է Արցախյան պատերազմի հետ կապված ծախսերով, քանի որ բյուջեի նախնական տարբերակում, որը ներկայացվել էր մինչև պատերազմը, նախատեսվում էր կապիտալ ծախսերի ընդամենը 16.3% աճ: Արդյունքում սպասվում է, որ 2019 թվականի համեմատ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի կշիռները ՀՆԱ-ի նկատմամբ կաճեն՝ համապատասխանաբար 4.8 և 1.8 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման




Պետական պարտքի կայունության ապահովման նպատակով 2021թ. կիրականացվի հարկաբյուջետային սահուն կոնսոլիդացիա, ինչի արդյունքում պետական բյուջեի ծախսերը 2020թ. համեմատ կնվազեն ՀՆԱ-ի 2.5 տոկոսային կետի չափով: Ընդ որում, կապիտալ ծախսերը կնվազեն ՀՆԱ-ի 1.3 տոկոսային կետի չափով և կկազմեն 3.4%՝ իսկ ընթացիկ ծախսերը՝ 1.1 տոկոսային կետով և

կկազմեն 25.6%: Սակայն, անվանական մակարդակով ընթացիկ ծախսերի նվազում չի նախատեսվել 2021 թվականին՝ չնայած այն հանգամանքին, որ COVID-19 համավարակի հետ կապված հակաճգնաժամային միջոցառումների գծով լրացուցիչ ծախսեր նույնպես նախատեսված չեն: Փոխարենը նախատեսվել է ընթացիկ ծախսերի 0.7% աճ, մինչդեռ կապիտալ ծախսերը կնվազեցվեն 24.0%-ով և կկազմեն 216.3 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի 2021թ. կանխատեսվող ծավալը ցածր է նույնիսկ 2020թ. համար սպասվող նախնական (առանց պատերազմի հետ կապված ծախսերի) ցուցանիշից, որը կազմում է 223.7 մլրդ դրամ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման

2021 թվականին պետական բյուջեի ծախսերի 46.8 տոկոսը նախատեսվում է ուղղել ընդհանուր նշանակության պետական ծառայությունների ֆինանսավորմանը, որի ծավալը կաճի 2020թ. սպասվող ցուցանիշի նկատմամբ 5.3%-ով՝ կազմելով 865.9 մլրդ դրամ և հանդիսանալով ընդհանուր ծախսերի աճին ամենամեծ դրական նպաստումը ունեցող բաղադրիչը:

Գծապատկեր 7. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ ծառայությունների խոշորացված խմբերի, %



Տնտեսական ծառայություններին ուղղվող գումարների ծավալի գծով 2020թ. սպասվում է կտրուկ աճ՝ 72.1%-ի չափով, ինչի արդյունքում նկատելիորեն կաճի նաև դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում՝ կազմելով 12.4%՝ 2019թ. 8.2%-ի փոխարեն: Այս աճը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի ազդեցությունների մեղմանն ուղղվող ծախսերով, որոնք 2021թ. չեն լինի՝ հանգեցնելով տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի՝ 2020թ. համեմատ 24.3% նվազման, ինչի արդյունքում այդ ծախսերի տեսակարար կշիռը կնվազի՝ կազմելով 9.4%:

Պետական բյուջեի ծախսերի հաջորդ խոշոր խումբը սոցիալական ծախսերն են, որոնց ծավալը 2020թ. կաճի շուրջ 11.4%, սակայն տեսակարար կշիռը փոքր-ինչ կնվազի՝ կազմելով 43.0%՝ նախորդ տարվա 43.9%-ի փոխարեն: 2021թ. սոցիալական ծախսերը կաճեն 1.1%-ով, իսկ դրանց տեսակարար կշիռը՝ 0.6 տոկոսային կետով:

Պահուստային ֆոնդի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կտրուկ նվազել է վերջին տարիներին: 2019թ. փաստացի տվյալներով պահուստային ֆոնդի համար գումարներ չեն հատկացվել, իսկ 2020 և 2021 թվականների համար նախատեսվում է բավական փոքր գումարներ՝ համապատասխանաբար 5.1 և 3.9 մլրդ դրամ, որոնք կազմում են համապատասխան տարիների ընդհանուր ծախսերի 0.3% և 0.2%-ը:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքն ըստ գործառնական դասակարգման

	2018 փաստ.	2019 փաստ.	2020 բյուջե	2021 բյուջե (լրամշակված)
մլրդ դրամ				
Ընդամենը	1,447.1	1,629.4	1,855.7	1,850.9
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	640.0	779.4	822.1	865.9
Տնտեսական ծառայություններ	129.6	134.0	230.7	174.5
Սոցիալական ծառայություններ	643.1	716.1	797.8	806.6
Պահուստային ֆոնդ	34.3	0.0	5.1	3.9
Աճ, %				
Ընդամենը	-3.8	12.6	13.9	-0.3
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	-7.5	21.8	5.5	5.3
Տնտեսական ծառայություններ	-12.2	3.4	72.1	-24.3
Սոցիալական ծառայություններ	0.1	11.3	11.4	1.1
Պահուստային ֆոնդ	49.0	-100.0	-	-24.5
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր նշանակության պետական ծառայություններ	-3.4	9.6	2.6	2.4
Տնտեսական ծառայություններ	-1.2	0.3	5.9	-3.0
Սոցիալական ծառայություններ	0.0	5.0	5.0	0.5
Պահուստային ֆոնդ	0.8	-2.4	0.3	-0.1

Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող գումարների ընդհանուր ծավալը 2021-ին կաճի 5.3%-ով՝ կազմելով 865.9 մլրդ դրամ: Դրանց կազմում ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերն ունեն ամենամեծ տեսակարար կշիռը, որը ավելի կաճի 2021 թվականին՝ հասնելով 45.9%-ի: Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերի ծավալի աճը 2021թ. կկազմի 9.8%՝ ընդհանուր բնույթի հանրային

ծառայություններին ուղղվող ծախսերի աճին ունենալով 4.3 տոկոսային կետ դրական նպաստում:


Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծավալի 9.8% աճից 7.8 տոկոսային կետը պայմանավորված կլինի պետական պարտքի գծով գործառնությունների սպասվող 15.8% աճով, որը 2020թ. 168.1 մլրդ դրամից 2021 թվականին կհասնի 194.7 մլրդ դրամի:

Աղյուսակ 3. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2018 փաստ.	2019 փաստ.	2020 բյուջե	2021 բյուջե (լրամշակված)
մլրդ դրամ				
Ընդամենը	640.0	779.4	822.1	865.9
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	278.5	320.1	361.7	397.1
Պաշտպանություն	238.5	315.6	308.0	312.2
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	123.1	143.7	152.5	156.6
Աճ, %				
Ընդամենը	-7.5	21.8	5.5	5.3
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1.4	14.9	13.0	9.8
Պաշտպանություն	-19.0	32.3	-2.4	1.4
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.5	16.7	6.1	2.7
Նպաստումը, տոկոսային կետ				
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	0.5	6.5	5.3	4.3
Պաշտպանություն	-8.1	12.0	-1.0	0.5
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.1	3.2	1.1	0.5

Ընդհանուր նշանակության պետական ծառայությունների կազմում ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականին կնվազի պաշտպանական ծախսերի տեսակարար կշիռը՝ համապատասխանաբար 3.0 և 1.4 տոկոսային կետով: 2021թ. կնվազի նաև հասարակական կարգի, անվտանգության և դատական գործունեությանն ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը՝ հասնելով 18.1%:

Գծապատկեր 8. Ընդհանուր նշանակության պետական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %



Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը 2021թ. կկազմեն 174.5 մլրդ դրամ՝ 2020թ. սպասվող ցուցանիշի համեմատ նվազելով 24.3%-ով, որին ամենամեծ նպաստումը կունենա տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերի 23.8% նվազումը՝ ունենալով 20.2 տոկոսային կետ բացասական նպաստում: Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի նվազմանը զգալի նպաստում կունենա նաև բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին ուղղվող ծախսերի 35.9% նվազումը, որի բացասական նպաստումը կկազմի 3.6 տոկոսային կետ:


Աղյուսակ 4. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2018 փաստ.	2019 փաստ.	2020 բյուջե	2021 բյուջե (լրամշակված)
մլրդ դրամ				
Ընդամենը	129.6	134.0	230.6	174.5
Տնտեսական հարաբերություններ	112.2	111.9	195.4	148.9
Շրջակա միջավայրի պաշտպանություն	5.7	5.8	12.3	10.9
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	11.7	16.2	22.9	14.7
Աճ, %				
Ընդամենը	-12.2	3.4	72.1	-24.3
Տնտեսական հարաբերություններ	-13.4	-0.3	74.6	-23.8
Շրջակա միջավայրի պաշտպանություն	5.3	2.2	111.4	-11.4
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-7.1	38.8	41.1	-35.9
Նպաստումը, տոկոսային կետ				
Տնտեսական հարաբերություններ	-11.7	-0.2	62.3	-20.2
Շրջակա միջավայրի պաշտպանություն	0.2	0.1	4.8	-0.6
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-0.6	3.5	5.0	-3.6

Արդյունքում տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում կաճեն տնտեսական հարաբերություններին և շրջակա միջավայրի

պաշտպանությանն ուղղվող ծախսերը, և կնվազի բնակարանային շինարարությանը և կոմունալ ծառայություններին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռը:

Գծապատկեր 9. Տնտեսական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %



Պետական բյուջեի **սոցիալական ծախսերը** 2021 թվականին կաճեն 1.1%-ով՝ հիմնականում պայմանավորված սոցիալական պաշտպանության և առողջապահության ոլորտների ուղղվող ծախսերի համապատասխանաբար 2.6% և 3.4% աճերով, որոնց նպաստումները սոցիալական ծախսերի աճին կկազմի 1.6 և 0.5 տոկոսային կետ:


Աղյուսակ 5. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերը

	2018 փաստ.	2019 փաստ.	2020 բյուջե	2021 բյուջե (լրամշակված)
մլրդ դրամ				
Ընդամենը	643.1	716.1	797.8	806.6
Առողջապահություն	79.6	99.3	113.7	117.5
Հանգիստ, մշակույթ և կրոն	25.3	33.6	30.9	30.6
Կրթություն	121.6	129.3	161.1	153.6
Սոցիալական պաշտպանություն	416.6	453.9	492.0	504.9
Աճ, %				
Ընդամենը	0.1	11.3	11.4	1.1
Առողջապահություն	-4.4	24.8	14.6	3.4
Հանգիստ, մշակույթ և կրոն	-2.7	32.6	-7.8	-1.1
Կրթություն	-2.2	6.3	24.6	-4.7
Սոցիալական պաշտպանություն	1.9	9.0	8.4	2.6
Նպաստումը, տոկոսային կետ				
Առողջապահություն	-0.6	3.1	2.0	0.5
Հանգիստ, մշակույթ և կրոն	-0.1	1.3	-0.4	0.0
Կրթություն	-0.4	1.2	4.4	-0.9
Սոցիալական պաշտպանություն	1.2	5.8	5.3	1.6

Արդյունքում, սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքում կաճեն սոցիալական պաշտպանությանը և առողջապահությանն

ուղղված ծախսերը՝ համապատասխանաբար 0.9 և 0.3 տոկոսային կետով, և կնվազեն կրթության և մշակույթի ու հանգստի ծառայություններին ուղղվող ծախսերի տեսակարար կշիռները համապատասխանաբար 0.8 և 0.1 տոկոսային կետով:

Գծապատկեր 10. Սոցիալական ծառայություններին ուղղվող ծախսերի կառուցվածքը, %




ՀՀ պետական բյուջեի պակասուրդը

Ինչպես արդեն նշվեց, 2020 թվականին տեղի է ունեցել մի կողմից՝ պետական բյուջեի եկամուտների նվազում, մյուս կողմից՝ ծախսերի աճ, ինչի արդյունքում սպասվում է, որ 2020թ. տարեկան արդյունքներով կարճանագրվի բյուջեի պակասուրդի զգալի աճ՝ հասնելով 429.7 մլրդ դրամի և նախորդ տարվա համեմատ աճելով ավելի քան 6.7 անգամ: Ընդ որում, սպասվող պակասուրդի մեծությունը մոտ 100 մլրդ դրամով ավելի է պետական բյուջեի՝ 2020թ. սեպտեմբերի վերջի դրությամբ ճշտված պլանի ցուցանիշից:

ՀՆԱ-ի նկատմամբ պետական բյուջեի պակասուրդը 2020թ. նախորդ տարվա համեմատ կաճի 6.1 տոկոսային կետով՝ կազմելով 7.1% և մոտենալով վերջին ժամանակներում ամենաբարձր՝ 7.6% պակասուրդի մակարդակին, որն արձանագրվել էր 2009թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ունեցած հետևանքների արդյունքում:


2021 թվականին, իրականացնելով հարկաբյուջետային սահուն կոնսոլիդացիա, կառավարությունը նախատեսում է նվազեցնել պակասուրդի մեծությունը՝ հասցնելով այն ՀՆԱ-ի 5.3%-ին (341.4 մլրդ դրամ): Հարկ է նշել, որ պետական բյուջեի լրամշակման արդյունքում պակասուրդի մակարդակը զգալիորեն՝ մոտ 67.3 մլրդ դրամով մեծացվել է՝ արտացոլելով Արցախյան պատերազմի ազդեցությունները հաջորդ տարվա բյուջեի վրա:

Գծապատկեր 11. Պետական բյուջեի պակասուրդը



2020թ. պետական բյուջեի պակասուրդի մոտ 83.8%-ը նախատեսվում է ֆինանսավորել ներքին ռեսուրսների հաշվին, իսկ մնացած մասը՝ արտաքին³: Սակայն 2021թ. բյուջեի պակասուրդի մեծ մասը՝ մոտ 59.4%-ը նախատեսվում է ֆինանսավորել արտաքին աղբյուրների հաշվին, որոնց հիմնական մասը կկազմի եվրապարտատոմսերի թողարկումը:

Գծապատկեր 12. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ




³ 2020թ. պետական բյուջեի պակասուրդի սպասվող մեծության ֆինանսավորման աղբյուրների մասին տվյալներ առկա չեն 2021թ. բյուջեի մասին օրենքի նախագծի փաթեթում: Հետևաբար, ներկայացված է 2020թ. ճշտված պլանով նախատեսված ֆինանսավորման կառուցվածքը:

ՀՀ պետական պարտքը

2020 թվականին տեղի ունեցած բացասական իրադարձությունների ազդեցությունների հետևանքով կաճի նաև պետական պարտքը: Մի կողմից՝ անհրաժեշտ կլինի փոխհատուցել բյուջեի նվազող եկամուտները, մյուս կողմից՝ ֆինանսավորել աճող ծախսերը: Այդ պայմաններում, սպասվում է պարտքի աճ՝ ՀՆԱ-ի մոտ 12.2 տոկոսային կետի չափով, ինչի արդյունքում 2020 թվականի վերջում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կկազմի շուրջ 65.7 տոկոս: Ընդ որում, առավելապես ներքին աղբյուրների հաշվին պակասուրդի ֆինանսավորման արդյունքում ներքին պարտքի տեսակարար կշիռը կաճի 4.3 տոկոսային կետով՝ հասնելով 25.3%-ի: Կառավարության պարտքի կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2020թ. նախորդ տարվա համեմատ կաճի մոտ 11.6 տոկոսային կետով՝ կազմելով 61.5% և գերազանցելով «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության 60% սահմանային շեմը:

2021 թվականին տնտեսության վերականգնման և հարկաբյուջետային կոնսոլիդացիայի պայմաններում սպասվում է պարտքի աճի շարունակություն: Այսպես, պարտքի ծավալը կաճի մոտ 11.7%-ով՝ անցնելով 9 մլրդ դոլարը, իսկ պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կաճի 4.1 տոկոսային կետով՝ հասնելով 69.8 տոկոսի: Պետական պարտքի մակարդակի աճը տեղի կունենա կառավարության պարտքի աճի հաշվին, որի կշիռը ՀՆԱ-ի նկատմամբ 2021 թվականին 2020 թվականի համեմատ կաճի 4.5 տոկոսային կետով՝ կազմելով 66.0%:

Գծապատկեր 13. Պետական պարտքը



2020 թվականի համեմատ 2021 թվականին պետական բյուջեի ավելի փոքր պակասուրդի պայմաններում պարտքի բարձր տեմպով աճը բացատրվում է արտարժույթային պետական պարտատոմսերի տեղաբաշխմամբ, որոնց ծավալը կկազմի մոտ 241.9 մլրդ դրամի չափ (մոտ 500 մլն ԱՄՆ դոլար), ինչը եվրապարտատոմսերի թողարկման նվազագույն ծավալն է: Ստացվում է, որ 2021 թվականին կառավարությունը կներգրավի ֆինանսական ռեսուրսների ավելի մեծ ծավալ, քան անհրաժեշտ է դեֆիցիտի ֆինանսավորման համար՝ ստեղծելով բուֆեր չնախատեսված ծախսերի առաջացման կամ եկամուտների նվազման դեպքում օգտագործելու համար:

ՀՀ պետական բյուջեի համապատասխանությունը հարկաբյուջետային կանոններին

ՀՀ հարկաբյուջետային նոր կանոնների համակարգը մշակվել և հաստատվել է 2017 թվականի դեկտեմբերի 20-ին «ՀՀ բյուջետային համակարգի մասին» և «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 23-ի N 942-Ն որոշման ընդունմամբ: Կանոնների համակարգը ներառում է ծախսային կանոններ, որոնք ուժի մեջ են մտնում պարտքի սահմանված շեմերը գերազանցելիս: Մասնավորապես.

1. Երբ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը գերազանցում է 40%-ը, պետական բյուջեի կապիտալ ծախսերը չպետք է փոքր լինեն բյուջեի պակասուրդից:
2. Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության՝ 50-60% միջակայքում գտնվելու դեպքում, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճով:
3. Երբ կառավարության պարտքը գերազանցում է ՀՆԱ 60%-ը, ընթացիկ առաջնային ծախսերի աճի տեմպը սահմանափակվում է նախորդ 7 տարիների ՀՆԱ-ների միջին աճից 0.5 տոկոսային կետով նվազեցված ցուցանիշով, ընթացիկ ծախսերը սահմանափակվում են հարկերի և տուրքերի մեծությամբ:

Ըստ 2021թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի փաթեթի՝ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականներին չի պահպանվի վերոհիշյալ 1-ին կանոնը: Այսպես, 2020 թվականին կապիտալ ծախսերը նախատեսվել են 284.7 մլրդ դրամի չափ, ինչը 145.0 մլրդ դրամով փոքր է, քան նույն տարվա բյուջեի պակասուրդի սպասվող ցուցանիշը, իսկ 2021թ. նախատեսվում է իրականացնել 216.3 մլրդ դրամ կապիտալ ծախս՝ ինչը 125.1 մլրդ դրամով պակաս է պակասուրդի մեծությունից, որը կանոններով սահմանված նվազագույն մակարդակի ուղենիշն է: Բյուջեի

պակասության ֆինանսավորման համար անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ պետական պարտք, իսկ այս կանոնի չպահպանման պարագայում ստացվում է, որ կառավարությունը պարտք է ներգրավելու ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար, որոնք լրացուցիչ արդյունք չեն ստեղծում և չեն նպաստում այդ պարտքը հետագայում մարելուն:

Վերոհիշյալ 2-րդ և 3-րդ կանոնները վերաբերում են ընթացիկ ծախսերի աճի սահմանափակմանը՝ տնտեսության տրամադրած հնարավորությունների չափով: Քանի որ 2020թ. տեղի է ունեցել հարկային եկամուտների զգալի անկում, ապա նույնիսկ ընթացիկ ծախսերի՝ 2019թ. մակարդակի պահպանման դեպքում կխախտվեր 3-րդ կանոնը, ինչը նշանակում է, որ կանոնների պահպանման համար անհրաժեշտ էր նախատեսել ընթացիկ ծախսերի կրճատում: Դրա հնարավորությունները առկա էին՝ կապված կորոնավիրուսի պայմաններում մի շարք ծախսատեսակների (մի շարք միջոցառումներ, գործուղումներ, պատվիրակությունների ընդունում և այլն) իրականացման անհնարինությամբ: Սակայն, կառավարությունը նախատեսում է մեծացնել ընթացիկ ծախսերը ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականներին: Դրա արդյունքում, 2020 թվականին ընթացիկ ծախսերը կլինեն 272.9 մլրդ դրամով, իսկ 2021 թվականին՝ 194.5 մլրդ դրամով ավելի բարձր, քան հարկային եկամուտներն են՝ այդքանով խախտելով հարկաբյուջետային թերևս ամենախիստ կանոնը:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 8.3-րդ կետով նախատեսված է «բացառիկ դեպքի» կիրառման հնարավորությունը (օրինակ՝ խոշորածավալ տարերային և տեխնաժին աղետների, պատերազմական գործողությունների, տնտեսությունը խաղաղ ժամանակաշրջանից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման, տնտեսական ցնցման հանգամանքներով պայմանավորված), որի դեպքում կառավարությունը կարող է օրինական ճանապարհով շրջանցել հարկաբյուջետային կանոնները: Հաշվի առնելով 2020թ. COVID-19 համավարակի առաջացրած տնտեսական ճգնաժամը, ինչպես նաև Արցախյան պատերազմը, կառավարությունը գործարկել է «բացառիկ դեպքի» կարգավորումները՝ վերոհիշյալ կանոնների խախտման փաստը հիմնավորելու համար:

Սակայն, պետք է նշել, որ հարկաբյուջետային կանոնների պահպանումը ինքնանպատակ չէ: Կանոնները միտված են պետական ֆինանսների կայունության ապահովմանը՝ հնարավորություն ընձեռելով կառավարությանը իրականացնել տնտեսական աճը խթանող քաղաքականություն՝ միաժամանակ նվազեցնելով պետական պարտքի բեռը: Սակայն, այդ կանոնների խախտմամբ, տեղի է ունենում մի կողմից՝ պարտքի աճ, մյուս կողմից՝ չի ձևավորվում տնտեսական արդյունք: Այսինքն՝ պարտք/ՀՆԱ հարաբերակցության աճը տեղի է ունենում և՛ պարտքի աճի,

Ա՛ ՀՆԱ-ի նվազման (կամ դանդաղ տեմպով աճի) հաշվին: Հետևաբար, հաշվի առնելով պարտքի կանխատեսվող աճի մակարդակը, նույնիսկ «բացառիկ դեպքի» համար հիմնավոր հանգամանքների առկայության պայմաններում, կառավարությունը պետք է պահպաներ հարկաբյուջետային կանոնները: Այլապես հաջորդ տարիներին պետական ֆինանսների համակարգի կայունությունը կլինի վտանգված, իսկ նոր ցնցումների առաջացման պարագայում կարող են ի հայտ գալ անվճարունակության իրական ռիսկեր:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում 2020 թվականը չափազանց ծանր ժամանակաշրջան էր ինչպես տնտեսական զարգացումների, այնպես էլ բնակչության կենսամակարդակի և հասարակական տրամադրությունների տեսանկյունից: Տարին աշխարհի երկրների մեծ մասի, այդ թվում՝ ՀՀ-ի համար սկսվեց առողջապահական ճգնաժամով, որը հետևանք էր նախադեպը չունեցող կորոնավիրուսային (COVID-19) համավարակի: Համավարակի տարածումը զսպելու նպատակով ՀՀ կառավարությունը մարտի կեսերից մինչև մայիսի կեսերը ընկած ժամանակահատվածում կիրառեց կարանտինային սահմանափակումներ: Այս սահմանափակումները, սակայն, «աչքի չընկան» բավարար արդյունավետությամբ, քանի որ կառավարությանը չհաջողվեց վերականգնել երկրի առողջապահական կայունությունը:

Հատկանշական է, որ արդյունավետ և թիրախային չէին նաև ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները: Իսկապես, կորոնավիրուսային շուկը 2020-ի երկրորդ եռամսյակից տեղափոխվեց նաև երրորդ եռամսյակ՝ չարդարացնելով տնտեսության արագ վերականգնման «հույսերը»: Այսպիսով, ծախողված պետական կառավարման պայմաններում ՀՀ տնտեսությունը հայտնվեց խոր ճգնաժամում՝ բացասաբար անդրադառնալով նաև բնակչության բարեկեցության վրա:

2020 թվականի երրորդ եռամսյակի ավարտին վերոհիշյալ բացասական զարգացումներին ավելացավ թերևս հնարավոր վատագույնը. սեպտեմբերի 27-ից Ադրբեյջանը սանձազերծեց պատերազմ Արցախի Հանրապետության նկատմամբ: Պատերազմի բացասական ելքը հարուցեց բազում անորոշություններ պետական ինստիտուտների գործունեության վերաբերյալ: Խորացավ հասարակություն-պետություն անջրպետը՝ հիմքեր ստեղծելով հասարակական համերաշխության խաթարման համար:

Այսպիսի սոցիալ-տնտեսական միջավայրում ակնկալվում էր, որ կառավարության հիմնական փաստաթուղթը՝ 2021 թվականի պետական բյուջեն, ինչ-որ չափով կփարատի հասարակության մտահոգությունները իրենց և պետության ապագայի վերաբերյալ: Սակայն կառավարությունը ներկայացրեց ինտերգիոն բյուջե՝ չկարողանալով կամ չցանկանալով առերեսվել իրականությանը:

2020 թվականի արդյունքների մասով վերոհիշյալ փաստաթուղթը արձանագրում է, որ կգրանցվի տնտեսական անկում՝ շուրջ 7.9%-ի չափով: 2020-ին պետական բյուջեի պակասուրդը կհասնի ՀՆԱ-ի 7.1%-ին, ինչը բավականին բարձր է նախորդ տարիների համեմատ: Մյուս կողմից՝

կառավարության պարտքը կգերազանցի ՀՆԱ-ի 60% սահմանային շեմը և կկազմի 61.5%:

2021-ի կանխատեսումների մասով նշվում է, որ տնտեսական աճը կլինի բավական ցածր՝ շուրջ 3.2%: Կանխատեսվում է, որ 2021-ին կառավարության պարտքը 2019-ի համեմատ կաճի մոտ 16.1 տոկոսային կետով՝ հասնելով 66.0%-ի, իսկ պետական պարտքը 2019-ի համեմատ կաճի մոտ 16.3 տոկոսային կետով՝ հասնելով 69.8%-ի: Սա չափազանց վտանգավոր է, քանի որ ցանկացած շուկի պարագայում, որը կհանգեցնի կառավարության կանխատեսումների շեղմանը բացասական ուղղությամբ, տեղի կունենա պարտքի ավելի մեծ աճ, որն արդեն կանցնի 70%-ը՝ լուրջ վտանգներ ստեղծելով հարկաբյուջետային կայունության տեսանկյունից: Այդպիսի ցնցում կարող է լինել փոխարժեքի նույնիսկ փոքր արժեզրկումը, որի նախանշաններն արդեն իսկ երևում են:

Ընթացիկ տարում ստեղծված իրավիճակի կապակցությամբ որևէ հստակ քաղաքականություն 2021 թվականի համար նախատեսված չէ: Մասնավորապես՝ չկան կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումների շարունակության կամ նոր միջոցառումների վերաբերյալ ուղերձներ, ինչպես նաև նախատեսված չէ Արցախյան պատերազմի հետ կապված միջոցառումների իրականացման ծրագրեր: Սա բավական վտանգավոր է, քանի որ նշված երկու գործոններով պայմանավորված լրացուցիչ ծախսերի անհրաժեշտության առաջացումը (ընդ որում, դրանք կարող են լինել խոշոր ծավալով) բավական իրատեսական է:

Կարևոր է ընդգծել, որ կառավարությանը իր ներկայացրած փաստաթղթում «հաջողվել է» անտեսել թերևս կարևորագույն խնդիրը, որ առաջացել է հարկաբյուջետային համակարգում կորոնավիրուսային շուկի և պատերազմի հետևանքով: Այդ խնդիրը կապված է «հարկաբյուջետային կայունություն-տնտեսության պոտենցիալի վերականգնում» դիլեմայի հետ: Իսկապես, ներկա ճգնաժամը հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է խթանել պահանջարկը, այդ թվում՝ պետական ծախսերի միջոցով: Մյուս կողմից, կառավարությունը ունի շատ փոքր «ֆիսկալ տարածություն», քանի որ վտանգված է պետական պարտքի կայունությունը: Ակնկալվում էր, որ կառավարությունը պետք է ներկայացներ, թե որն է այս դիլեմայի իր լուծումը, ինչպիսի սցենարով պետք է շարժվի պետությունը, և ինչպես պետք է կառավարել այդ սցենարի դեպքում բնորոշ ռիսկերը:

Ակնհայտ է, որ ներկա իրողությունների ֆոնին մեծ կարևորություն է ստանում պետական ներդրումների ծավալի աճը և դրանց արդյունավետության բարձրացումը: Միայն այդ ճանապարհով է հնարավոր վերականգնել տնտեսության ներուժային կարողությունները՝ առանց պետական ֆինանսների

կայունությունը «զոհաբերելու»: Ավադ, կառավարությունը չի ներկայացրել որևէ համարձակ ծրագիր կամ ծրագրային մոտեցում՝ տնտեսական զարգացումների բացասական շղթան բեկելու և վստահության մթնոլորտ ձևավորելու համար: Իսկ առանց վստահության անհնարին է խթանել երկարաժամկետ աշխատատեղերի ձևավորումը և բնակչության սոցիալական պայմանների բարելավումը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: